ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1013-Ա «15» մարտի 2024 թ.

Ն.ՉԱՐԲԱԽԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.54 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Վալերի Մարությանի դիմումը՝ Ն.Չարբախի 12-րդ փողոցի հ.54 հասցեում գտնվող (տնամերձ) հողամասի սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 07.06.2022թ. հ.Հ-5949, 03.07.2023թ. հ.Հ8264, 25.12.2023թ. հ.Հ.16612 գրությունները՝ կից փաստաթղթերով, 07.11.1994թ. Ն.Չարբախի գյուղխորհրդի գործադիր կոմիտեի նիստի արձանագրության հ.17 քաղվածքը, Երևան քաղաքի ժողովրդական պատգամավորների Շահումյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 10.11.1994թ. հ.38/8 որոշումը, հարևաններ Անահիտ Հարությունյանի և Անահիտ Սարգսյանի հավաստագրերը, ՀՀ «Երևան» նոտարական տարածքի նոտար Մարինե Սարգսյանի հ.6983 որոշումը, ՀՀ «Երևան» նոտարական տարածքի նոտար Անահիտ Ղազարյանի կողմից հաստատված փաստաթղթերը, ՀՀ կադաստրի կոմիտեի հ.ԱՏ-13102022-01-0208 տեղեկանքը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ քննարկվող հասցեում գտնվող հողամասի մակերեսը՝ ըստ փաստաթղթերի, կազմում է 360.0քմ, որն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, գտնվում է ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 10-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 09.08.2023թ. հ.Դ-90130-23 եզրակացությունը և 14.08.2023թ. հ.Ն/41611-23, 28.09.2023թ. հ.Դ-115508-23, 27.10.2023թ. հ.Դ-127982-23, 05.02.2023թ. հ.Դ-4440-24 գրությունները.

1. Սահմանել, որ Ն.Չարբախի 12-րդ փողոցի հ.54 հասցեում գտնվող (տնամերձ) հողամասի 360.0քմ սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ